

ԱՆԱՍԵԱՆ ՅԱԿՈԲ. Հայկական Մատենագիտություն.
Ե—ժԸ դար, հատոր Ա. Երևան 1959, 40, էջ
I—XCV եւ սխալ 1—1228:

Ստուար հատոր մըն է այս, որ անդրա-
նիկն է նախատեսված տասը հատորներու,
որ իր բնոյթով չունի նախորդ եւ կը հան-
դիսանայ նշանակալից ներդրում սովետական
Հայագիտութեան եւ զոր կարելի է բնորոշել
«որպէս աղբիւրագիտական եւ բնագիտական
Մատենագիտութիւն»:

Գրեզոր Արասայ որդի մատենագիրը կը
զրէ «Գիտութիւնը գրոց ծով է անեզր եւ
անհաս եւ չի գրաւանդակն իմանալ ումեք
բոտ արժանոյն, այլ զսակաւս ի բազմաց»
(Գիրք պատճառաց): Եւ ահաւասիկ Յակոբ
Անասեան եղած է մէկը, որ անխորտակելի
կորովով թիավարած է գիրքերու ծովին
մէջ՝ «անհաս եւ անեզր» եւ գիտաբութիւն-
ներու բերանը ալիքներու դէմ անվահեր ու
անդու մաքառելով իմացած է «Զբաւանդակն
բոտ արժանոյն»:

Ժրաջան ու բազմաճիւղ Անասեանի
այս կոթողական երկը ունի շատ բնորոշակ
եւ բովանդակալից ներածութիւն մը (էջ
V—XXXVIII), ուր նախ կը ճշդէ Մատենա-
գիտութիւն բառին իմաստը: «Մատենագի-
տութիւնը — իսկական առումով — ամբող-
ջութիւնն է այն գիտելիքների, որոնք վերա-
բերում են նիւթական եւ հոգեւոր մշակոյթի
հետ կապուած գրաւոր աղբիւրներին եւ ու-
սումնասիրութիւններին, այն գիտելիքներին,
որոնք վերաբերում են գրքերին բոտ բովան-
դակութեան...: Թէեւ Մատենագիտութիւնը
որպէս գիտութիւն կամ գիտութեան իւրա-
յատուկ բնագաւառ մեզանում ձեւաւորեց
ԺԺ. դարի ընթացքում, սակայն անկէ յառաջ
ալ անոր արմատներն ու հետքերը հնութեան
մէջ մխրճուած են» (Անկանոնական գիրքերու
ցանկեր, Գիրք պատճառաց, Յաղագս շարա-
կանաց, Վասն մեկնողաց Աստուածաշունչ
գրոց, Պատմագիրք Հայոց, էջ VIII—XXI եւ
XXXIX—XCV):

Անասեան ԺԺ. դարէն այս ուղղութեամբ
սկսած աշխատանքները քանի մը խումբի կը
բաժնէ. Ա. խումբին կը պատկանին այն գոր-
ծերը, որոնց ծրագիրն եղած է դասաւորել
եւ ներկայացնել հայ մատենագիտութեան
ինքնուրոյն եւ թարգմանական երկերը ժա-
մանակագրական եւ կամ ուրիշ կարգով:

տպագիր եւ անտիպ հաւասարապէս. Բ.
խումբին՝ այն գործերը, որոնց ծրագիրն
եղած է դասաւորել եւ նկարագրել առհա-
սարակ հայերէն տպագիր գիրքերը հայկա-
կան տպագրութեան սկզբնաւորութենէն կամ
որոշ ժամանակէ մը սկսած. այս խումբին
մէջ Հ. Ա. Ղազրիկեանի Հայկական նոր Մա-
տենագիտութիւնը իր ծաւալով եւ բովան-
դակութեամբ «աննախընթաց» հրատարա-
կութիւնն է, բայց անաւարտ: Գ. խումբին
կը վերաբերին այն գործերը, որոնց ծրագիրը
եղած է նկարագրել հայ պարբերական մա-
մուլի մէջ լոյս տեսած յօդուածները եւ անոր
մէջ յիշուած է «Հանդէս Ամսօրեայ»-ի «Բո-
վանդակութիւն աղղային թերթերու» կամ
«Աղղային թերթերու բովանդակութեան
քաղուածք» եւ իրեն ամփոփող նշանակուած
է Բ. Պալճեան, որ ուղղելու է՝ Հ. Բառնա-
բաս Պիլէդիկեան (էջ XXVI): Դ. խումբին
կ'ենաթրկուին այն գործերը, որոնց ծրագիրն
է դասաւորել եւ նկարագրել հայերէն եւ օտար
լեզուներով հրատարակուած այն գիրքերը,
հայկական եւ օտար պարբերականներու մէջ
լոյս ընծայուած այն յօդուածները, որոնք
հայկական բնոյթ ունին: Այս խումբին մէջ
յատկապէս կը փայլին Վիեննական Միութա-
րեանները, որոնցմէ ոմանք կարեւոր ամփո-
փումներ տուած են նաեւ Indogermanisches
Jahrbuchի մէջ — այս՝ Անասեանի ուղղա-
գրութենէն վերաբերած է: Ե. խումբը կը ներկա-
ցնեն հայերէն Զեռագիրներու ցուցակա-
գրութիւնները գիրքերու կամ թերթերու
մէջ:

Անասեան իր այս ներածութեան մէջ
յայտ կը բերէ հիմնութիւն եւ դատողութիւն:
Անոր Հայկական Մատենագիտութեան
առարկայ կը կազմեն Ե—ԺԸ. դարերու ըն-
թացքին կուտակուած մատենագրական նիւ-
թերը, որոնք՝ Ա. կամ տպագրուած են առան-
մէջ ցիրուցան եւ Բ. անտիպ են եւ կը գտ-
նուին հայերէն Զեռագիրներու մէջ — ու-
րեմն՝ անտիպ եւ տպագիր: Հեղինակը ա-
ռարկային կը մերձենայ ընդգրկուած նիւ-
թերու աղբիւրական եւ բնագիտական նշա-
նակութիւնը բացայայտելու տեսանկիւնէն
սխալմա՞: Նկատի կ'առնէ վերնագիրը կամ
խորագիրը, որուն կը յաջորդէ սկզբնա-

Հայկական Մատենագիտութեան յօդ-
ուածները կազմուած են հեղինակային եւ
առարկայական սկզբունքով եւ դասաւորուած
այրուբենական կարգով: Իւրաքանչիւր յօդ-
ուած ունի Տեղեկատու բաժին — ծանօթու-
թիւններ հեղինակի եւ անոր երկի մասին, —
Բնագրի բաժին — որ նիւթի համաձայն կ'ու-
նենայ խմբաւորում եւ ստորաբաժանում, —
Գրականութեան բաժին — մատենագիրն
կեանքին եւ անոր գրութեան մասին ուսում-
նասիրութիւններ:

Այս ձեւով ներկայ հատորին մէջ նկատի
կ'առնուին միայն Ա. տառով սկսող հեղինակ-
ները եւ կարեւոր նիւթերը (Ակեր, Աղթարք,
Ամուսնութիւն) եւ այն Ա. Դ. Վ. ու Արասէ
սկսած մինչեւ Առաքել Սալաճորեցի (սիւ-
նակ 1—1162, իւրաքանչիւր էջ ունի երկու
սիւնակ), ապա Յաւելուած (սիւնակ 1163—
86) եւ Յանկ բնագրական սկզբնատողերի
(սիւնակ 1189—1228):

Ահա կոթողական գործ մը, որուն առջեւ
պէտք է կենալ հիացումով եւ սակայն հեղի-
նակը համեստօրէն կը զրէ «Մեր հրատարա-
կութեան մէջ անխուսափելիօրէն կը լինեն
նաեւ թերութիւններ, որոնք յատուկ են իր
տեսակին մէջ առաջին փորձ հանդիսացող
ամէն մի աշխատութեան: Կը լինեն նաեւ
թերթիմացութիւններ: Յանկալի է որ մաս-

նագէտները իրենց կարծիքն ու դիտո-
ղութիւնները յայտնեն ներկայ հատորի
մասին եւ պիտանի թերութեանքներ անեն մեր
յետագայ աշխատանքների համար, որպէս
զի յաջորդ հատորները գերծ լինեն այդ
թերութիւններից, որոնք երեւում են այս
հատորում: Մենք վարձատրուած կը լինենք,
եթէ այս աշխատանքը գրաւի մեր գի-
տական հասարակութեան ուղղորդութիւնը
(էջ XXXVIII):

Անասեան կրնայ ապահով ըլլալ՝ որ իր
հոյակապ երկին մէջ թերութիւններ չառ-
սակաւ են եւ վստահ՝ որ հասարակութեան
ուղղորդութիւնը արդէն գրաւած է: «Մեր-
մանող է յաղաթահասակ եւ մշակ յաղաթա-
նակող ու իր «արտը ոսկուն» է եւ հունձքը
առատ: Իրեն երախտապարտ պիտի ըլլան
ի մասնաւորի՝ բանասիրութեամբ զբաղող-
ները, որոնց գործին ծանրութեան դժուա-
րին մէկ մասը իր վրան առած է եւ միայն-
գամայն ցուցուած՝ թէ բանասէր է ուղղա-
գատ: Իր այս գրութեան ծանօթ իւրաքան-
չիւր անհատ իրեն կը մաղթէ քաջողու-
թիւն, յարատեւութիւն եւ հրատարակում
միւս հատորներու — որքան շուտ՝ այն-
քան լաւ:

Հ. Հ. ՈՍԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ուղարկուած ծանուցումները):

Արովեան Խաչատուր, Վէրք Հայաստանի,
ողբ հայրենասերի, պատմական վէպ:
Երևան 1959, 40, էջ 224:

Արաբեան Ռ. Ա., Հայկական խաղային նո-
տագրութիւնը (ուսումնասիրական եւ
վերծանութեան հարցեր): Երևան, Գիտ.
Ակադ. հրտրկչ. 1959, 80, էջ 286:

Ամիրան Խաչիկ, Ազատարար ինքնաշարժ:
Ստամպուլ 1959, տպ. Հերման, 80, էջ
98: (Մանչր. Թօ, թիւ 1:)

Աշխատութիւններ Հայաստանի պետական
պատմական թանգարանի.

Երևան, Հատոր Ա. 1948, էջ 304.

Երևան, Հատոր Բ. 1950, էջ 280.

Երևան, Հատոր Գ. 1950, էջ 168.

Երևան, Հատոր Դ. 1952, էջ 258.

Երևան, Հատոր Ե. 1959, էջ 280.

Գեորգեան Կարօ, Ամէնուն Տարեգիրքը 1960
է տարի. Պէյրութ 1960, Հայ Կաթող.
Տպրն. 80, էջ 644:

Դարիկ Գ., Ծանրաբեռված տապան: Երե-
ւան, Պետհրատ. 1959, 80, էջ 260:

Թորամանեան Թորոս, Աստղերու ճամբան,
բանաստեղծութիւններ: Պէյրութ 1960,
80, էջ 140: (Հրտկ. «Գրական շրջանակ»-ի
թիւ 4:)

Թումանեան Յովհ., Անուշ եւ Թմբկաբերդի
առումը (պոէմ). Իսթանպուլ 1959, տպ.
A. B. C., 160, էջ 48: (Մանչր. «Դէպի
լոյս» թիւ 5:)

Իրանեան Տիգրան, Խ. Միութիւն պիտի չվե-
րադառնամ: Թրգմ. Ս. Զ. Գազիւրէ 1959,
տպ. Յուսարեք, 80, էջ 209:

- Լեւոնեան Գարեգին, Յուշել : Երեւան, Պետհրատ. 1959, 8⁰, էջ 204:
- Մովսէս Վ. Ս., Գիշատիչ թռչուններ : Ստան-պուլ 1959, տպ. Հերման, 8⁰, էջ 184:
- Հատուկեան Ռ., Կեանքի մը երեք Կիրա-կները. Թատերգութիւն երեք արար : Իսթանպուլ 1959, 8⁰, էջ 58:
- Հէյրապ Թոր, Ակու ալու, Չատկի կղզու գաղտնիքը : Երեւան, Պետհրատ. 1959, 8⁰, էջ 276:
- Մօզեան Լեւոն, Հայ ազգային ոգին մեր ներ-կայ աշխարհաբարին մէջ : Փարիզ 1960, տպ. Տէր-Յակոբեան, 8⁰, էջ 84:
- Յակոբեան Թ. Խ., Երեւանի պատմութիւնը. (1801—1879 թ. թ.). Երեւան 1959, 8⁰, էջ 672:
- Շիրվանգադէի ստեղծագործութիւնը, (Յօ-դուածների ժողովածու). Երեւան 1959, 8⁰, էջ 218:
- Տարագնեան Պ. Ն., Գաղտնի ոստիկանա-կան տասը պատմութիւններ. (Թրգմ. Պ. Ն. Տ.): Հայէպ, հրատ. Տարագնեան-ձիգմէճեան գրատուններու, 8⁰, էջ 263:
- (Մանչ. «Միտք», թիւ 1):
- Տեղեկագիր Ընդհ. և հաշուիչիւններ 1955, 1956, 1957 տարեշրջաններու. (Հ. Բ. Ը. Միութեան): Փարիզ 1959, 8⁰ էջ 296:
- Տրդատեան Տրդատ, Յաղթը և Յաղթեցի-ները : Պոստըն 1959, տպ. Հայրենիք, 8⁰, էջ 188. (Հրատ. Յաղթ գիւղի Հայրենից. Միութեան):
- Ճեղատապանութիւնը խորհրդային Միութենէն ներս. Ուսումնասիրութիւն զանգուա-ծային սպանութեանց : (Թարգմ. Մա-նուկեան Նիկէ) : Պէյրութ 1960, 8⁰, էջ 160: (Հրատ. Խորհրդ. Միութեան ու-սումնասիրութեան կաճառի, Միւնիխ):
- Փալանջեան Աշոտ, Նշանառու : Երեւան, Պետհրատ 1959, 8⁰, էջ 172:
- Փափագեան Յ. Դ., Մատենադարանի պարս-կերէն վաւերագրերը. Ա. Հրավարտակ-ներ, պրակ Բ (1601—1650): (Ռուսերէն և պարսկերէն բաժինով): Երեւան, Ակադեմիայի Հրատ. 1959, 8⁰, էջ 594:
- Քարտէզ — Հայկական ՍՍՌ ուսումնական

- Հայպետումանկ. Հրատ. Երեւան 1959:
- Փափագեան Վահրամ, Սրտիս պարտքը Երեւան, Պետհրատ. 1959, 8⁰, էջ 175:
- Օմար Խայյամ, Քառեակներ : Երեւան, Պետհրատ. 1959, 8⁰, էջ 242:
- Օշական Բ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան.
- Հար. Բ. 1953, 8⁰, էջ 446:
- Հար. Գ. 1954, 8⁰, էջ 183:
- Հար. Դ. 1956, 8⁰, էջ 523:
- Հար. Ե. 1952, 8⁰, էջ 488:
- Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց :
- Օրացոյց, Սեդանի 1960 : Երեւան, Պետ-հրատ. 1959:
- Օրացոյց 1960 (Ա. Մարտիկեան, Ռ. Սիրու-նեան). Երեւան, Պետհրատ. 1959:
- Օրացոյց. Հայ ընտանիքի. ԻԱ տարի 1960.
- Հրատ. «Բամբեր» ամսաթերթի Մարտէշ:
- Օրացոյց «Նոր կեանքի». Պուլքէշ 1960:
- Օրացոյց. Քրիստոնեայ ընտանիքի Հայրենա-ւանդ — Ը. 1960: Պատրաստեց Միք. Վ. Մովսէսեան, Լիւն:
- Alem Jean-Pierre, L'Arménie («Que sais-je» No. 851). Paris 1959, Presse uni- versitaires de France, 8⁰, էջ 128:
- Movsessian P. L., Armenische Grammatik: West-, Ost- und Altarmenisch. Wien 1959, Mechitharisten - Buchdruckerei, 8⁰, էջ 423:
- Oudenrijn M. A., Lingue haicanae scrip- tores. Տպ. Վիեննա, Միւնիխ. տպ. 1959, 8⁰, էջ 336: (Վաճառատեղի A. Franke, Bern):
- Petros di Sarkis Gilanentz, The Chronicle of —. Translated from Garo Owen Mi- nasian, Lisbon 1959, 8⁰, էջ 77: (Ca- louste Gulbenkian Foundation Lib- rary).
- Orak A., Les Arméniens en Egypte à l'époque des Fatimites. (Extrait du «Cahier d'histoire égyptienne», Serie IX, Fasc. 3/4, p. 117—136). Le Caire, 1958:
- Сайнян, А. — Гарни и Гегард. Москва, 1958.